ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ IV ԴԱՐՈՒՄ

Ա. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Քրիստոնեության ընդունման սկզբնական շրջանում հայ և օտար աղբյուրները տեղեկություններ են տալիս գլխավորապես Հայաստանի արևմտյան և հարավ-արևմտյան երկրամասերում եղած եկեղեցական թեմերի մասին։ Իհարկե, IV դարում, Հայաստանում դեռևս նոր պետական կրոն ճանաչված քրիստոնեությունը չէր կարող միանգամից արմատավորվել ողջ երկրում և ամբողջ տարածքով մեկ չէին կարող անմիջապես հիմնվել մեծ թվով եկեղեցական թեմեր։ Բայց ինչո՞ւ հատկապես Հայաստանի արևմտյան և հարավ-արևմտյան մասերում հիմնվեցին առաջին թեմերը և արդյո՞ք IV դարի սկզբին թեմեր չկային արևելյան երկրամասերում։

Կեսարիայում ձեռնադրվելուց և վերադառնալուց հետո, Գրիգոր Լուսավորիչը ձեռնամուխ է լինում եկեղեցու կազմակերպմանը, և դա նրան շատ արագ հաջողվում է, որովհետև Մեծ Հայքի որոշ գավառներում և երկրամասերում նախապես կային քրիստոնեական համայնքներ և եպիսկոպոսներ։ Ագաթանգեղոսը հայտնում է, որ Գրիգոր Լուսավորիչը Հայաստանի զանազան նահանգների համար եպիսկոպոսներ ձեռնադրեց, իրեն վերապահելով Այրարատյան նահանգը՝ քանի որ Հայոց թագավորն այնտեղ էր նստում։ Ագաթանղեղոսը 12 եպիսկոպոսների անուններ է տալիս, առանց նշելու նրանց թեմերը, այնուհետև ավելացնում, որ դրանք հին քրմական դասից էին։ Ահա Ագաթանդեղոսի հայերեն խմբագրության այդ հատվածը. «...առեալ ձեռնադրութիւն ի նմանէ, որոց առաջնոյն՝ Աղբիանոս, որ ապա կողմանցն Եփրատակտն գետոյն լինէր վերակացու, երկրորդին՝ Եւտաղիոս, որ ի կողմասս վայրացն Բասենոյ կացեալ լինէր հովիւ, երրորդն՝ Բասոս. չորրորդն՝ Մովսէս, հինգերորդն՝ Եւսեբիոս, վեցերորդն՝ Յովհաննէս. եօթներորդն՝ Ազապէս. ութերորդն՝ Արտիթէս, իններորդն՝ Արսուկէս, տասներորդն՝ Անտիոքէս. մետասաներորդն՝ Տիրիկէս, երկուտասաներորդն՝ Կիւրակոս։ Այսք՝ որ յորդւոց քրմացն ընտրեցան լինել եպիսկոպոսոք կողմանց կողմանց, աճեցուցանէ զքարոզութիւնս»[1]։ Պողոս Անանյանի բացատրությամբ, դա հայ խմբագրի տեսակետն է, ըստ որի Հայաստանում մինչև Գրիգոր Լուսավորիչը չկար քրիստոնեություն և եպիսկոպոսներ ընտրվեցին նախկին քրմերից, որոնք դարձի եկան և հասան եպիսկոպոսության աստիճանի[2]։ Ս. Գրիգորի հունարեն վարքը վկայում է, որ Գրիգոր Լուսավորչի ձեռքով ձեռնադրվում են 13 եպիսկոպոսներ (այստեղ ութերորդը նշված է Աղբիոսը, որը չկա հայերեն խմբագրության մեջ)։ Եպիսկոպոսների անունների հետ հիշվում է նաև համապատասխան վիճակը։ Սրանցից առաջինը՝ Աղբիանոսն է, միակ նախկին քուրմը, որ քրիստոնյա դառնալուց հետո արժանի է լինում եպիսկոպոսական աստիճանին։ Անանյանը դրում է, որ մնացած 12 եպիսկոպոսների անուններից շատերը կամ հունական կամ աստվածաշնչյան ծագում ունեն, հետևաբար՝ եղել են քրիստոնյաներ[3]։

---

1 Ագաթանգեղոս. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1914, էջ 426—427։

2 Պ. Անանյան. Քրիստոնեության հետքեր Հայաստանի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզությունն առաջ. Վենետիկ, 1979, էջ 26։

3 Նույն տեղում։

Մենք ևս հակված ենք այն կարծիքին, որ այդ եպիսկոպոսները նախկինում (մինչև եպիսկոպոս ձեռնադրվելը) եղել են քրիստոնյաներ, բայց նրանց անունների հունական կամ աստվածաշնչյան ծագումը չենք ընդունում որպես գլխավոր փաստարկ։ Քանի որ այդ 13 եպիսկոպոսների քրիստոնյա անունները մեզ ոչինչ չեն ապացուցում, որովհետև հնարավոր է, որ դարձի գալուց հետո քրմերը, ինչպես ընդունված է, փոխեին իրենց անունները և կրեին քրիստոնեական անուններ։ Հետևաբար, այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ սրանք այն գավառների թեմակալ առաջնորդներն են, որտեղ մինչ Գրիգոր Լուսավորիչը եղել են քրիստոնեական համայնքներ, եկեղեցիներ կամ մատուռներ (այս սասին կխոսվի ստորև), և հնարավոր է, որ մինչ եպիսկոպոս ձեռնադրվելը նրանցից շատերը եղել են քրիստոնյաներ։

Գրիգոր Լուսավորիչն այս եպիսկոպոսներին ուղարկում է Հայաստանի հետևյալ գավառները՝ որպես թեմակալ առաջնորդներ.

1. Աղբիանոսին՝ Բագրևանդ և Եփրատի շուրջը եղած շրջանները.
2. Եւթաղիոսին՝ Բասեան
3. Բասոսին՝ Կոտայք
4. Մովսէսին՝ Եկեղիք և Դերջան
5. Եւսեբիոսին՝ Դարանաղի
6. Յովհաննէսին՝ Կարին
7. Ագապէսին՝ Սպերի կամ Սպարապետութեան տան
8. Աղբիոսին՝ Տարօնի և Տայոց երկրների և Մամիկոնեան տոհմի
9. Արտիթէսին՝ Խոռխոռունիք և Մաղխազների երկիր
10. Արսուկէսին՝ Շիրակ
11. Անտիոքէսին՝ Կորդուք
12. Տիրիկէսին՝ Վանանդ-Աբեղեանք-Գաբեղեանք
13. Կիւրակոսին՝ Արշամունիք[4]։

Բնականաբար, այս ցանկին պետք է ավելացնել Այրարատը, որը կաթողիկոսի անմիջական ենթակայության տակ էր և Վաղարշապատում էր գտնվում նրա նստավայրը։ Եկեղեցական ժողովների արձանագրություններում, պատմիչների մոտ և այլ աղբյուրներում Հայոց կաթողիկոսը հաճախ նշվում է որպես «եպիսկոպոս Այրարատոյ»։ Հետևաբար, ավելի ճիշտ կլինի խոսել ոչ թե 13, այլ 14 թեմերի մասին։

Հունարեն Ագաթանգեղոսի մեջ հիշատակված է Աղբիոս եպիսկոպոսը, որը հայերեն խմբագրության մեջ բացակայում է։ Աղբիոսը հիշատակված է նաև Ագաթանգեղոսի արաբերեն խմբագրության մեջ՝ որպես Տարոնի և Բգնունիքի եպիսկոպոս։ Պետք է ասել, որ արաբերեն խմբագրությունը այս խնդրում հարազատությամբ կրկնում է հունարենին, մի բացառությամբ միայն, որ Տիրիկեսը նշված է ոչ թե Վանանդի, այլ Ատրպատականի եպիսկոպոս[5]։ Գրիգոր Լուսավորչի կողմից ձեռնադրված Աղբիոս եպիսկոպոսի մասին (Աղուբիոս ձևով) հիշատակված է նաև մի Գավազանագրքում՝ «Յիշատակութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» վերնագրով, «Անընդհատ շարունակութիւն Առաքելական յաջորդութեան ուղղափառ Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց» ընդհանուր խորագրի տակ։ Ահա այդ Գավազանագրքի մեզ հետաքրքրող հատվածը. «Արդ, յետ լուսաւորութեան աշխարհիս Հայոց, որ եղեւ ի ձեռն սրբոյն Գրիգորի հովուապետութեան, կարգեաց զբոլոր Հայաստան աշխարհս առաջնորդ եւ տեսուչ հաւատացելոց՝ հրամանաւ քաջին Տրդատայ

---

[4] G. Garitte. Documents pour l'etude du livre d'Agathange. Vaticano, 1946, p. 102—104, § 172.

[5] Н. Марр. Крещение армян, грузин, абхазов и аланов. СПб., 1905, с. 137—139. Տե՛ս նաև՝ Ն. Մառ. Մկրտություն հայոց, վրաց, աբխազաց և ալանաց, թրգմ. Հուսիկ արքեպիսկոպոս. Վաղարշապատ, 1911, էջ 71—72։ Ն. Ադոնց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Երևան, 1987, էջ 365։

արքային Հայոց բարեպաշտի։ Յայնժամ ասի՝ թէ ըստ խնդրանաց եկեղեցւոյն Աղուրիոս անուն ոմն ձեռնադրեաց եպիսկոպոս առաքելական վիճակին Արտաղու։ Սա կոչեալ եպիսկոպոսութեան անդ ամս Իե։ Զկնի սորին կարգեալ է եկեղեցին Դանիէլ անուն ոմն եպիսկոպոս։ Սա կացեալ է ամս ԺԸ»[6]։ Այստեղ հիշատակված երկու եպիսկոպոսների՝ Դանիելի և Աղբիոսի (Աղուրիոս) անունները ցույց են տալիս, որ այս Դավազանագիրքը կազմողը ձեռքի տակ ունեցել է պատմական վավերաթղթեր, որոնցից օգտվելով կազմել է Արտաղի եպիսկոպոսների ցուցակը, որի համաձայն, բոլորն էլ ձեռնադրվել են Գրիգոր Լուսավորչի կողմից։ Հացունին ճիշտ կերպով նկատել է, որ «ցուցակդ հորինվեր է հօգուտ Արտաղու աթոռին առաքելականութեան, որ կը հեղհեղվի հոս ստեպ»[7]։ Իրոք, Դավազանագիրքը կազմվել է այն շրջանում, երբ Արտաղի աթոռը սկսել էր ավելի կարևորություն ստանալ, այսինքն՝ XIV դարում, Զաքարիա Սործորեցու ժամանակ (1330 թ.), երբ նա Արտաղի եպիսկոպոսն էր։ Բացի այդ, մեր հնագույն ժողովական արձանագրություններում և պատմիչների մոտ բոլորովին բացակայում է Արտաղի աթոռի հիշատակությունը՝ որպես IV դարում հիմնված թեմի։ Վերոհիշյալ Դավազանագիրքը կեղծիք է համարել նաև Պ. Անանյանը։ Միաժամանակ, նա նշում է, որ այստեղ ամեն ինչ չէ, որ հորինված է։ Աղբիոս և Դանիել եպիսկոպոսների անունները մեզ ծանոթ են, մեկը՝ Ս. Գրիգորի հունարեն Վարքից, մյուսը՝ Փավստոս Բուզանդի «Պատմությունից»։ «...Այս երկու եպիսկոպոսները,—գրում է Անանյանը,—ոչ թէ Արտաղու վիճակին եպիսկոպոսներ են, այլ Աշտիշատի, որ նույն ատեն Հայաստանի Մայր Եկեղեցին էր։ Առաջինը Աղուրիոս (Աղբիոս), ս. Գրիգորեն կարգվեցավ Տարոնի, «առաքելական աթոռին» եպիսկոպոս, և որուն անունը պահած է հունարեն Վարքը և անհետացած էր Ագաթանգեղոսի ներկա խմբագրության մեջեն։ Ուրեմն, Դավազանագիրքը կազմողը, այդ անունը ոչ հերյուրած է, և ոչ ալ գտած է Ագաթանգեղոսի մեջ. այլ պետք է գտած ըլլա պատմական ուրիշ վաւերաթուղթի մը մեջ, որ նույնիսկ կրնա գավազանագիրք մը եղած ըլլալ, քանի որ հոն նշանակված են թե անոր աթոռակալության տարիները և թե անոր անմիջական հաջորդը, նմանապես աթոռակալության տարիներով»[8]։

Աղբիոսը, այսպիսով, Ագաթանգեղոսի հունարեն խմբագրության համաձայն, նշանակվում է Գրիգոր Լուսավորչի փոխանորդ[9]։ Տարոնի եպիսկոպոսին, ս. Գրիգորի կողմից իր փոխանորդ նշանակելը խոսում է այն մասին, որ հենց այստեղ (Աշտիշատում) էր գտնվում Հայաստանի գլխավոր եկեղեցին IV դարում։ Իսկ Աղբիոսին տրված գովեստները ցույց են տալիս, որ նա կրթված և զարգացած եպիսկոպոս էր[10], հմուտ հունարեն ու լատիներեն լեզուներին, քաջածանոթ Ս. Գրքին, և պատահական չէր, որ հենց նրան է Գրիգոր Լուսավորիչը կարգել Տարոնի՝ որպես առավել նշանավոր և կարևոր թեմի եպիսկոպոս։ Արաբական վերսիան ևս վկայում է, որ Աղբիոսը լավ ծանոթ էր Ս. Գրքին, գիտեր մի քանի լեզուներ և կրթված հոգևորական էր։ «Քանզի երանելին Գրիգոր պատուիրեաց եպիսկոպոսին Աղբիոսի և ասաց ցնա. «Սի մեկնիր ի պատրկէ լից զերկիրն քարոզութեամբ»։ Եւ այս վասն այնորիկ, զի եպիսկոպոսն վարժեալ էր յայլ և այլ գիտութիւնս ի հռովմայեցւոց և ի հեթանոսաց բարբառս։ Եւ էր հզօր ի մեկնութիւնս սուրբ գրոց և ընդ նորա տեսչութեամբ էին Տարօն և Բզուն»[11]։ Ահա այս մասին է, որ չկա Ս. Գրիգորի վարքի՝ մեզ հասած հայերեն խմբագրությունում։ Այն, որ Տարոնի թեմի և Աղբիոսի անունը չկա հայերեն խմբագրության մեջ, հավանաբար կապված է

---

6 «Արարատ», 1868. № 8, էջ 103։

7 Հացունի. Կարևոր խնդիրներ հայ եկեղեցվո պատմութենեն. Վենետիկ, 1927, էջ 100։

8 Պ. Անանյան. Քրիստոնեության հետքեր..., էջ 40։

9 G. Garitte. Op. cit., p. 103, § 172.

10 Նույն տեղում, էջ 114, 193։

11 H. Марр. Указ. соч., с. 137—139.

հետևյալ հանգամանքի հետ. հայերեն խմբագրին անընդունելի պետք է լիներ Վաղարշապատի (Էջմիածնի)՝ V դարից սկսած արդեն որպես Հայոց Մայր եկեղեցու դերի անտեսումը և այն պատիվն ու տեղը, որ հատկացված էր Աշտիշատի (Տարոնի) եկեղեցուն և նրա եպիսկոպոսին։

Ագաթանգեղոսի մի շարք խմբագրությունների (հայերեն, հունարեն, արաբերեն և այլն) այս և բազմաթիվ հակասություններ ուսումնասիրության նյութ են հանդիսացել հայ և օտար մի շարք գիտնականների համար (Ն. Ադոնց, Պ. Անանյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Ն. Մառ, Հ. Գելցեր, Ժ. Գարիտ, Մ. Վան Էսբրուք և այլն)։ Ուսումնասիրելով Բուզանդի, Փարպեցու, Խորենացու մոտ Ագաթանգեղոսից պահպանված բազմաթիվ հատվածներ, բոլորն էլ հանգել են այն եզրակացության, որ հայերեն նախնական բնագիրը մեզ հայտնի չէ. մեզ հասած հայերեն խմբագրությունը գրվել է V դարի առաջին կեսին, իսկ հունարեն և արաբերեն խմբագրությունները թարգմանված են մեզ չհասած հայերեն բնագրից։ Հետևաբար, հատկապես Ագաթանգեղոսի հունարեն խմբագրությունն ավելի հարազատ է հայերեն բնագրին և պատմական մանրամասնություններով հարուստ, ավելի է լույս սփռում Հայաստանում նախագրիգորյան քրիստոնեության գոյության, եկեղեցիների և քրիստոնեական կենտրոնների վրա։

Մենք արդեն նշել ենք, որ Աշտիշատի եկեղեցին և Տարոնի եպիսկոպոսը կարևոր դեր են խաղացել Հայաստանում IV դարի ընթացքում։ Աշտիշատն էր Հայոց հոգևոր կենտրոնը քրիստոնեության արշալույսին։ Այս բանը հաստատվում է նաև Փավստոսի բազում վկայություններով. «Զայնու ժամանակաւ երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայր եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնու»[12]։ Աշտիշատի եկեղեցին կոչվում էր մեծ, առաջին և մայր՝ Հայաստանի բոլոր եկեղեցիների[13], «գլխաւոր սեղան, աթոռ իշխանութեան հայրապետացն»[14] և այլն։ Աշտիշատը, եկեղեցական կենտրոն լինելով, ժողովների գումարման գլխավոր վայրն էր։ Ներսես կաթողիկոսը Կեսարիայում օծվելուց հետո գնում է Տարոն և հրամայում Հայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսներին հավաքվել այնտեղ։ «Ժողովեցան ի գիւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ, զի նա էր մայր եկեղեցեացն ,և ի տեղի լեալ նախնեացն ժողովոց պիւնհոդոսին»[15]։ Պ. Անանյանը ևս, հիմնվելով Ագաթանգեղոսի հունարեն և արաբերեն խմբագրությունների ու Բուզանդի տեղեկությունների վրա, հետաքրքիր եզրակացությունների է հանգում Գրիգոր Լուսավորչից առաջ Հայաստանում եղած քրիստոնեական համայնքների վերաբերյալ, որի կենտրոններից մեկն էր Աշտիշատը։ Մասնավորապես՝ Հայաստանյայց Մայր եկեղեցին IV դարում գտնվել է ոչ թե Վաղարշապատում, այլ Աշտիշատում, չնայած այն բանին, որ Վաղարշապատում Գրիգոր Լուսավորիչը կառուցել էր Ս. Էջմիածինը և ինքն էլ նստում էր այնտեղ[16]։ Անանյանից առաջ Հ. Գելցերն է իր «Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը» գրքում[17] հանգել այդ գաղափարին, այսինքն՝ Աշտիշատի եկեղեցին ամբողջ IV դարի ընթացքում հատուկ դիրք և կարևորություն է ունեցել, իբրև առաջին Մայր եկեղեցի։ Մեզ հասած Ագաթանգեղոսի հայերեն խմբագրությունը պաշտոնական եկեղեցու ընդունած խմբագրությունն է, որը ժխտում է նախագրիգորյան շրջանի եկեղեցիների և քրիստոնեության գոյությունը և ամեն ինչ վերագրում Գրիգոր Լուսավորչին։ Մեզ ծանոթ հայերեն Ագաթանգեղոսը Գրիգոր Լուսավորչին ներկայացնում է

---

12 Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Պատմություն Հայոց. Երևան, 1987, գպր. Գ. գլ. Գ, էջ 14։

13 Նույն տեղում, գպր. Գ, գլ. ԺԴ, էջ 58։

14 Նույն տեղում, էջ 60։

15 Նույն տեղում, Դ, գլ. Դ, էջ 118։

16 Պ. Ա ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 15—16։

17 Հ. Գ ե լ ց ե ր. նշվ. աշխ., Վենետիկ, 1896, էջ 58 և հտ.։

իբրև քրիստոնեության առաջին քարոզիչ, մոռացնել տալով նախկին հալածված քրիստոնեության գոյությունը։ Սակայն իրականում, նա եղել է նախկին քրիստոնեության վերականգնողը և շարունակողը[18]։ Գելցերը ճիշտ կերպով նկատել է, որ մինչև Ներսես կաթողիկոսի մահը Հայոց եկեղեցին կախում ուներ Կեսարիայից։ Եվ այն ժամանակ միայն հնարվեց Վաղարշապատի պրոյցը կամ ավանդությունը, երբ որ իսպառ բնդհատվեց Կեսարիայի հետ ունեցած հարաբերությունը[19]։ Աշտիշատից բացի մատուռներ կամ եկեղեցիներ են գոյություն ունեցել նաև Եկեղյաց դավառում, ուր ամփոփված էին IV դարի սկզբին նահատակված Թեոդոր Սալհունու նշխարները[20], Ապերում, Դարանաղիում, Աղձնիքում (իրենց քրիստոնյա հոգևորականներով) և այլուր, այսինքն՝ այնտեղ, որտեղ կազմավորվել են Հայ Եկեղեցու առաջին թեմերը։

Հունարեն Ադաթանգեղոսը վկայում է, ինչպես տեսանք, որ Ս. Գրիգորը եպիսկոպոսական թեմ է հիմնել նաև Կորդուքում, որն իր աշխարհագրական դիրքով (Մեծ Հայքի հարավային գավառներից է) մի քիչ առանձնացած է մյուսներից։ Կորդուքում ևս, ինչպես մյուս գավառներում, որտեղ հիմնվեցին առաջին թեմերը, նախքան հայոց պաշտոնական դարձը պետք է եղած լինի քրիստոնեական համայնք։ Այդ մասին անուղղակի վկայություն կա Եվսեբիոս Կեսարացու «Պատմութիւն Եկեղեցւոյ» աշխատության մեջ, ուր երկու անգամ խոսվում է հայ քրիստոնյաների մասին։ Մի անգամ բյուզանդական կայսր Մաքսիմինոս Դայայի (305—313)՝ քրիստոնյաների դեմ հալածանքների կապակցությամբ, մյուս անգամ հիշում է Մեհրուժան անունով մի հայ եպիսկոպոսի, որին նամակ էր գրել Ալեքսանդրիայի Դիոնիսիոս եպիսկոպոսը[21]։ Ահա այդ վկայություններից առաջինը. «Յարեաւ եւ պատերազմ ի բռնաւորէն ընդդէմ Հայոց, որք ի սկզբանէ անտի բարեկամք եւ մարտակիցք էին Հռովմայեցւոց, զորս քրիստոնեայս եւ յերկրպագութիւն ճշմարտին Աստուծոյ փոյթքս, նեղելով բռնաւորին, ատելոյն Աստուծոյ, զի կռոց եւ գիւաց զոհեսցեն, փոխանակ բարեկամաց թշնամիս, եւ փոխանակ նիզակակցաց պատերազմողս ընդդեմ իւր յարոյց զնոսա»[22]։ Եվսեբիոսի այս վկայությունը քննության նյութ է դարձրել ֆրանսիացի պատմաբան Դյուշենը և իր տեսակետները հայտնել այնտեղ հիշատակված հայերի մասին[23]։ Այդ հայերը չէին կարող Հայոց Տրդատ III թագավորի իշխած Մեծ Հայքի հայերը լինել, քանի որ Դեկոս կայսեր հրովարտակները (որով հալածանքի էին ենթարկվում քրիստոնյաները) անհնարին է, որ անկախ Հայաստանի մեջ հրապարակված ու գործադրված լինեին։ Հռոմեական օրենքները երբեք Հայաստանում չեն գործել և Հռոմեական պետությունը երբեք չի միջամտել հայոց ներքին խնդիրներին։ Ուստի դժվար է ենթադրել, գրում է Դյուշենը, որ Հռոմը Մեծ Հայքի Տրդատ թագավորի վրա կրոնական օրենքներ կամ կալանքներ դներ[24]։ Եվսեբիոսի հիշատակած հայերը չէին կարող նաև Փոքր Հայքի հայերը լինել, քանի որ նրանք դարեր ի վեր հպատակ էին Հռոմեական պետությանը, և ոչ թե

---

18 Պ. Ա ն ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 77—78։

19 Հ. Գ ե լ ց ե ր. Նշվ. աշխ., էջ 64—65։

20 Ղ. Ա լ ի շ ա ն. Հայապատում. Վենետիկ, 1901, էջ 175—179։ Ն ո ւ յ ն ի՝ Արշալոյս քրիստոնեության ի Հայս, Վենետիկ, 1920, էջ 91—93։

21 Եւսեբիոս Կեսարացի. Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, դիրք Զ, գլ. ԽԶ, էջ 517։

22 Նույն տեղում, դիրք Թ, գլ. Ը, էջ 688—689։

23 Duchesne. L'Arménie chrétienne dans l'histoire Ecclesiastique d'Eusèbe. Mélange Nicole. Geneve et Bâle, 1905, pp. 105—109. Հայ թրգմ. տե՛ս Հ. Պ. Տ է ր Հ ա տ յ ա ն. Քրիստոնյա Հայաստանը Եվսեբիոսի Եկեղեցական Պատմության մեջ.—«Հանդես Ամսօրյա», ԻԴ, 1910, էջ 268—271։

24 Duchesne. Op. cit., p. 108.

լոկ նրա կողքին ապրող «Բարեկամներ և նիզակակիցներ էին[25]»։ Մեր կարծիքով Դյուշենը ճիշտ կերպով եզրակացնում է, որ դրանք «Անդրտիգրիսյան» կոչված երկրամասերի հայերն էին։ Երկրամասեր, որոնք Հայաստանին էին պատկանում մինչև 297 թ., բայց այդ թվականին Դիոկղետիանոսի զորավար Գալերիոսի՝ պարսից նկատմամբ տարած հաղթանակից հետո, Մծբինի պայմանագրով (298) մտան հռոմեական գերիշխանության տակ, Տիգրիս գետը սահման ընդունելով Պարսկաստանի և Հռոմի միջև։ Այդ երկրամասերն էին՝ Սոֆենե-Ծոփքը, Ինգելենե-Անգեղտունը, Արզանենե-«Արզնարզիան», Կորդուենե-Կորդուք, Միջագետքի Ծավդեք, Ռեհիմենե-Արվաստան գավառները և Մոքսենե-Մոկքը։ Սրանք Մեծ Հայքի հարավ-արևելյան և հարավային գավառներն էին, որոնք մտան Հռոմի անմիջական գերիշխանության տակ՝ առանց խզելու իրենց ներքին կապը Հայաստանից և կառավարվում էին իրենց բնիկ հայ իշխանների կողմից։ Այս գավառների ներքին կյանքում ոչինչ չփոխվեց։ Միակ փոփոխությունը, որ տեղի ունեցավ, թերևս այն էր, որ այդ երկրամասերի բնիկ հայ իշխանները քաղաքականապես Հայոց թագավորի կողմից կառավարվելու փոխարեն, ենթարկվում էին Հռոմեացի կառավարչին։ Մանանդյանը ևս գտնում է, որ դրանք Անդրտիգրիսյան երկրներն են եղել։ Նա գրում է, որ Մաքսիմինոսը պատերազմ էր մղել ոչ թե քրիստոնեություն ընդունած Տրդատ III-ի դեմ և կամեցել վերահաստատել Հայաստանում հեթանոսությունը, այլ՝ Անդրտիգրիսյան երկրներից մեկի դեմ, որ 298 թ. Մծբինի պայմանագրով միացվել էին կայսրությանը[26]։ Այդ երկրամասերում քրիստոնեական համայնքներ կազմավորվել էին դեռևս մ. թ. II դարում։ Ըստ Թադեոս Առաքյալի Վկայաբանության, նրա առաքելության շրջանակը գծված է Մծբինի շուրջը, Ուռհա, Կորդվաց աշխարհ, Ծավդեք, Արզն[27] և այլն։ Ուստի, պատահական չէ, որ ս. Գրիգորի հիմնած առաջին թեմերից մեկը գտնվել է հենց այդ գավառներում (կամ դրանցից մեկում, կոնկրետ՝ Կորդուքում), ուր կային վաղքրիստոնեական համայնքներ։ Փավստոսը վկայում է, որ երբ Ս. Ներսեսը Գնելի սպանության պատճառով գժտվեց Արշակի հետ, վերջինս որոշեց նրա տեղը կաթողիկոս դնել Զոնակին և «հրաման տայր կոչել զամենայն եպիսկոպոսս Հայոց աշխարհին», որպեսզի գան ձեռնադրեն այդ նոր թեկնածուին։ Նրա կոչին արձագանքեցին երկու հոգի միայն՝ Աղձնյաց և Կորդվաց եպիսկոպոսները[28]։ Այսպիսով, Փավստոսը ևս վկայում է, որ արդեն IV դարում Կորդուքում և Աղձնիքում գոյություն ունեին Հայաստանյայց Աթոռին պատկանող եկեղեցական թեմեր, որ լիովին համընկնում է հունարեն Ագաթանգեղոսի տվյալների հետ։

Եվսեբիոսի մյուս վկայությունը, ինչպես ասվել է, վերաբերում է Մեհրուժան անունով եպիսկոպոսին։ Ընդհանրապես դա հայ եկեղեցականի մասին եղած ամենահին տեղեկությունն է, ըստ որի III դարի կեսերին (248—265 թթ.) հայ Մեհրուժան եպիսկոպոսը գրագրություն է ունեցել Ալեքսանդրիայի Դիոնիսիոս եպիսկոպոսի հետ[29]։ Ինչպես ապացուցում է Ադոնցը, նրա նստավայրը եղել է Ծոփաց աշխարհի Անգեղ գավառում[30]։ Մեհրուժան եպիսկոպոսի մասին այդ հիշատակությունը վկայում է, որ արդեն III դարի կեսերին Ծոփքում գոյություն ուներ քրիստոնեական եկեղեցի, որի հետագա

---

25 Duchesne. Op. cit., p. 108.

26 Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Բ, մաս Ա, Երևան, 1978, էջ 130։

27 Վկայաբանություն Թադեոս Առաքյալի.—Սուիերք Հայկականք, Վենետիկ, 1853, Ը, էջ 11։ Տե՛ս նաև՝ Մ. Օրմանյան. Ազգապատում. հ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 21—22։

28 Փավստոս, դպր., Դ, գլ. ԺԶ, էջ 194։

29 Եվսեբիոս Կեսարացի, դպր. Զ, գլ. ԽԶ, էջ 517։

30 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 386։

զարդացումով եպիսկոպոսություն ստեղծվեց Ծոփաց աշխարհին հարևան Տարոն գավառում (Աշտիշատում)[31]։

Եղեսիայի մոտիկությունն այս գավառներին (Կորդուք, Աղձնիք, Ծոփք և այլն) ենթադրել է տալիս, որ քրիստոնեությունն այստեղ թափանցել է Եդեսիայից, այսինքն՝ քրիստոնեության այն հոսանքը (այդ մասին կխոսվի ստորև), որ մուտք գործեց Հայաստան հարավից, սկզբում՝ Ծոփք, այնուհետև Տարոն, Բզնունիք և այլն, ուր և հաստատվեցին առաջին եկեղեցական թեմերը։

Մենք արդեն խոսել ենք հունարեն Ագաթանգեղոսի և Բուզանդի՝ եկեղեցական թեմերին վերաբերող տեղեկությունների համապատասխանության մասին։ Սակայն Ադոնցը գտնում է, որ Ագաթանգեղոսի տվյալները բոլորովին պիտանի չեն Գրիգոր Լուսավորչի օրոք եկեղեցական հիերարխիայի վիճակը պարզելու համար, և որպես միակ վստահելի աղբյուր նշում է Բուզանդի «Պատմությունը», ամեն կերպ հակադրելով այն Ագաթանգեղոսին։ Ադոնցը այն տեսակետին է, որ եթե Բուզանդն ընդամենը մի քանի եպիսկոպոսական թեմ է նշում IV դարի վերջում, ապա դարի սկզբում դրանք պետք է որ տվելի քիչ լինեին, և որ Ագաթանգեղոսն անհավատի աղբյուր է Հայ եկեղեցու սկզբնավորման շրջանում նրա նվիրապետության ուսումնասիրման համար[32]։ Նա գրում է, որ Խոսրովս Բուզանդի նկարագրած ժամանակաշրջանում քրիստոնեական եկեղեցին Հայաստանում շատ քիչ եպիսկոպոսություններ ուներ, և որպես դրա հիմնական կռվան, նշում է Խոսրովի թագավորության ժամանակ իր աշխատության վերջում պատմիչի թվարկած մի քանի եպիսկոպոսությունները[33]։ Իրոս, Բուզանդը հիշատակում է մի քանի եպիսկոպոսների անուններ՝ Բասենի, Բագրևանդի, Վանանդի, Տայքի, Տարոնի, Մանազկերտի, Կորճայքի[34], ինչպես նաև Աղձնիքի[35]։ Բայց Բուզանդը գոյություն ունեցող ոչ բոլոր թեմերն է նշում, նա նպատակ չի ունեցել թվարկել բոլոր թեմերը և, բացի այդ, պատմիչը գրում է, որ Ներսես Մեծի ժամանակ նրա «ձեռական իշխանությունն» տակ էին տասնհինգ գավառ կամ վիճակ, որոնցից գլխավորներ նշում է Այրարատը, Դարանաղին, Եկեղիքը, Տարոնը, Բզնունիքը և Ծոփքը. «Զայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն. զի հնդետասան դաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իբրև սեպհական ի բնմէ առանձին տողոգի նոցա էր կարգեալ։ Եւ յայն դաւառ գլխաւոր դաւառք այս էին՝ Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփք և որ ընդ մեջ նոցա և որ շուրջ զնոքօք»[36]։ Այս վեց գլխավոր գավառներում էին գտնվում հեթանոսական գլխավոր աստվածների մեհյանները, հետևաբար՝ հեթանոս օրմերի կալվածները և հարուստ ունեցվածքը։ Ներսես Մեծը նրանց պատկանող կալվածները և ունեցվածքը կաթողիկոսական կալվածների մեջ մտցրեց։ Սրանք, լինելով կաթողիկոսի ձեռական իշխանությունը, կազմում էին առանձին եկեղեցական վիճակներ։ Այս ցանկը համապատասխանում է Ագաթանգեղոսի տվյալներին՝ IV դարի սկզբին գոյություն ունեցող եկեղեցական թեմերի վերաբերյալ։ Բուզանդը հիշատակում է նաև Մանազկերտի թեմի մասին։ Նա գրում է, որ Խոսրով թավավորի և Վրթանես կաթողիկոսի օրոք Մանավազյան և Որդունի տոհմերը միմյանց դեմ պատերազմներ էին մղում։ Թագավորը խլում է նրանց տիրույթները և իսպառ վերացնում այդ երկու նշանավոր տոհմերին։ Աղբիանոս եպիսկոպոսին Հայոց թագավորը տալիս է Մանավազյանների ավանը և նրանց նահապետի աթոռանիստ գյուղը՝ Մանազկերտը՝ իր բոլոր սահման-

31 Նույն տեղում։

32 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 384։

33 Նույն տեղում, էջ 383։

34 Փավստոս, գրք. Զ, գլ. Բ, էջ 400, գլ. Գ, էջ 402, գլ. Դ, էջ 402, 404 և այլն։

35 Նույն տեղում, գրք. Դ, գլ. ԺԶ, էջ 194։

36 Փավստոս, գրք. Դ, գլ. ԺԴ, էջ 178—180։

ներով և նրա շուրջը եղած գավառներով՝ Եփրատ գետի կողմերում։ Իսկ Որդունիների տիրույթները տալիս է Բասենի եպիսկոպոսին, որի աթոռանիստ դառնում է Որդու ավանը[37]։ Փարպեցին ևս հիշատակում է Մանազկերտի (Մանձկերտ ձևով) և Բզնունիքի թեմերը[38]։ Բզնունիքը, ինչպես նշել ենք, կա նաև Ագաթանգեղոսի արաբերեն խմբագրության մեջ, որը Տարոնի հետ միասին կազմում էր մեկ թեմ[39]։

Այսպիսով, հիմնվելով այլ աղբյուրների (Բուզանդ, Եվսեբիոս Կեսարացի) վրա, կարող ենք շարունակել Ագաթանգեղոսի ցանկը IV դարի թեմերի վերաբերյալ և կավելանան՝ 15. Ծոփքի, 16. Աղձնիքի, 17. Բզնունիքի, 18. Մանազկերտի թեմերը։

Եթե ուշադրություն դարձնենք IV դարի սկզբին Հայաստանում եկեղեցական թեմերի տեղաբաշխման աշխարհագրության վրա, ապա կտեսնենք, որ դրանք գտնվում են, ինչպես նշվել է, Մեծ Հայքի արևմտյան ու հարավարևմտյան գավառներում և մոտ են գտնվում կայսրությանը։ Կարծում ենք դա բնական է և ունի իր պատճառները։ Ինչպես գրում է Ադոնցը, Հայ Եկեղեցու գոյության առաջին դարում, Գրիգոր Լուսավորչից մինչև Մեծ Հայքի բաժանումը IV դարի վերջին, Հայաստանը գտնվում էր առավելապես կայսրության ազդեցության տակ, և այդ պատճառով էլ եկեղեցական հարաբերությունները նրանց միջև ավելի սերտ էին[40]։ Իսկ Մանանդյանը նշում է, որ քրիստոնեության մուտքը Հայաստան ավելի սերտ հարաբերությամբ կապված վերջինիս Հռոմեական կայսրության հետ ոչ միայն քաղաքականապես, այլև մշակութային առումով[41]։ Դա ճիշտ է, բայց հատկապես այդ երկրամասերում եկեղեցական վիճակների հիմնումը Գրիգոր Լուսավորչի կողմից ունի ևս երեք, թերևս գլխավոր պատճառներ։ Մեկի մասին արդեն խոսել ենք։ Դա, մինչև հայոց պաշտոնական դարձը, առաջին երեք դարերում քրիստոնեության գոյությունն էր Հայաստանում։ Այդ գավառներում ու երկրամասերում քրիստոնեական համայնքների, եկեղեցիների և մատուռների (Ծոփքում, Աշտիշատում, Եկեղիքում և այլն) գոյությունը, Հայաստանում քրիստոնեության պաշտոնական ճանաչումից հետո հեշտացրեց Գրիգոր Լուսավորչի կողմից առաջին թեմերի հիմնումը և եկեղեցական գործի կազմակերպումը։ Երկրորդ, դա կապված է Հայաստան քրիստոնեության մուտքի հետ, որը տեղի ունեցավ երկու ճանապարհով։

Ինչպես գիտենք, Հռոմեական կայսրությունում քրիստոնեությունը սկզբում տարածվել է նրա արևելյան պրովինցիաներում՝ Ասորիքում, Պաղեստինում, Կիլիկիայում, Կապադովկիայում և այլն։ Այս երկրներից քրիստոնեական ուսմունքը թափանցում է Հայաստան, ինչպես նաև Պարսկաստան։ Արդեն II—III դդ. քրիստոնեությունն իշխող կրոն էր դարձել կայսրության արևելյան այդ մասերում։ Քրիստոնեության մի հոսանքը հարավից՝ Ուռհայի կամ Եդեսիայի կողմից, մուտք է գործում Մեծ Հայքի հարավային և հարավարևելյան գավառներ, սկզբում՝ Ծոփք, այստեղից էլ Հայաստանի խորքը՝ Տարոն, Բզնունիք, Հարք և այլն։ Անանյանը նկատում է, որ սրանով պետք է բացատրել Հայոց Եկեղեցու որոշ կապը Եդեսիայի աթոռի հետ[42]։ Այդ կապի մասին խոսվում է նաև Հայոց Կանոնագրքի Առաքելական կանոններից մեկում. «Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոյն Ուռհայ եւ ամենայն քաղաքն որ շուրջ գնովա, Մծբին եւ Արաբ եւ սահմանակից Միջագետաց՝ Հայք եւ ամենայն հիւսիս եւ հարաւ ի Թադդէ առաքելոյ, որ էր մի յերկոտասանից առաքելոյն»[43]։ Քրիստոնեության մյուս հոսանքը Մեծ Հայք

37 Նույն տեղում. գպր. Գ, գլ. Դ, էջ 18։

38 Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի. Հայոց պատմություն. Երևան, 1982, էջ 100—101։

39 Н. Марр. Указ. соч., с. 136—137.

40 Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 400։

41 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. Բ, մաս Ա, էջ 133։

42 Պ. Ա ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 75։

43 Կանոնագիրք Հայոց. հ. Ա, ե., 1964, ԼԴ, Թ, էջ 61—62։

թափանցեց արևմուտքից՝ Կապադովկիայից և Փոքր Հայքից։ Այն նախ և առաջ տարածվեց նրանց հարող Բարձր Հայքի գավառներում՝ Դերջանում, Դարանաղիում, Կարինում, Եկեղյաց գավառում, Սպերում և այլն։ Կեսարիայից է գալիս նաև Գրիգոր Լուսավորիչը և ծավալում իր գործունեությունը։ Բարձր Հայքի այդ գավառները, ինչպես գրում է Փավստոսը, պատկանում էին Լուսավորչի տոհմին. Դարանաղի և Եկեղյաց գավառներում (Թիլ ավանում) էր գտնվում նրանց տոհմական դամբարանը[44], Եկեղիքում՝ Թեոդորոս Սալհունու նահատակության վայրը և մատուռը, իսկ Աղբիանոսի տոհմին էին պատկանում Տարոնը (Աշտիշատ), Բզնունիքը։ Հետագայում Աղբիանոսին տրվեց նաև Մանավազյանների տիրույթը, որտեղ հիմնվեց Մանազկերտի եպիսկոպոսությունը, որը հաճախ (ավելի ուշ շրջանում) իր ամենամեծ գավառի՝ Հարքի անունով կոչվում էր նաև Հարքի եպիսկոպոսություն։

Եվ վերջապես մի հանգամանք ևս, մեր կարծիքով, մեծ դեր է խաղացել այդ գավառներում և երկրամասերում առաջին եպիսկոպոսությունները հիմնելու գործում։ Ագաթանգեղոսը վկայում է, որ թագավորական ողջ ընտանիքը և մեծ թվով նախարարներ իրենց զորքերի հետ միասին մկրտվում են Եփրատ-Արածանիի ակունքների մոտ՝ Բագավան վայրում, նպատ սրբրպան լեռան ստորոտում[45]։ Դարանաղիի Անի ամրոցում էր գտնվում Արամազդի մեհյանը, Եկեղիքի Երիզա ավանում, Աղձնիքի Դարբնաց Քար կոչված վայրում, Աշտիշատում՝ Անահիտ դիցուհու մեհյանները, Թիլում՝ Նանեին։ Աշտիշատը հռչակավոր էր իր երեք մեհյաններով, որոնք նվիրված էին Վահագնին, Անահիտին, Աստղիկին, հեթանոս քրմերի գլխավոր կենտրոնատեղին էր և այլն։ Սրանք նախաքրիստոնեական շրջանում Մեծ Հայքի առավել նշանավոր հեթանոսական կենտրոններն էին։ Մեր պատմիչները շեշտում են, որ Գրիգոր Լուսավորիչն ավերում էր հեթանոսական մեհյանները, հին պաշտամունքի հուշարձանները և նրանց տեղը հիմնում եկեղեցիներ։ Հեթանոսական պաշտամունքն արմատախիլ անելու և նոր կրոնը ժողովրդի մեջ տարածելու, երկրում արմատավորելու համար, հեթանոսական հենց այդ կենտրոններում, բնականաբար, պիտի ստեղծվեին առաջին եկեղեցական թեմերը։

Կորյունի մոտ կան որոշ տեղեկություններ մինչև գրերի գյուտը և Մեսրոպ Մաշտոցի ծավալած գործունեությունը Հայաստանում գոյություն ունեցած եպիսկոպոսությունների և Մաշտոցի կողմից հիմնադրվածների մասին։ Կորյունը գրում է, որ երբ Մաշտոցն իր աշակերտների հետ անցնում է Հայաստանի արևմտյան (Հունաց) մաս, նրան դիմավորում են Հունաց մասի եպիսկոպոսները, որոնք բաղում պատիվներ են տալիս նրան, իսկ Դերջանի Դինիթ եպիսկոպոսին Մաշտոցն իր հետ տանում է Կոստանդնուպոլիս[46]։ Փարպեցին հիշատակում է Եկեղյաց գավառի Հոհան եպիսկոպոսին, Մուշ եպիսկոպոսին՝ Տարոն գավառից[47], որոնք պետք է օգնեին Մաշտոցին հայոց այբուբենի կարգավորման գործում։ Ադոնցը, մեջբերելով Կորյունի և Փարպեցու վերը արված հիշատակությունները և ավելի ուշ շրջանի եկեղեցական ժողովների մասնակիցների ցուցակները, որոնցում կային եպիսկոպոսներ Դերջանից, Եկեղիքից, Դարանաղիից և այլն, գրում է, որ VI—VII դդ. եպիսկոպոսություններ գոյություն ունեին ներքին Հայքի գլխավոր գավառներում՝ Կարինում, Դերջանում, Եկեղիքում, Դարանաղիում։ Ե՞րբ և ի՞նչ հաջորդականությամբ հիմնվեցին այս եպիսկոպոսությունները, շարունակում է Ադոնցը, այնքան էլ պարզ չէ[48]։ Մինչդեռ սրանք հենց այն թեմերն են, որոնք հիշատակված են հունարեն ու արաբերեն Ագաթանգեղոսի և Բուզանդի մոտ, հիմնվել են IV դարի սկզբին՝ Գրիգոր Լուսավորչի կողմից և մինչև 387 թ. բա-

44 Փավստոս, գպրք. Դ, գլ. Բ, էջ 14, գլ. ԺԱ, էջ 46, գլ. ԺԲ, էջ 52։

45 Ագաթանգեղոս, էջ 420—421։

46 Կորյուն. Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 112—114։

47 Ղազար Փարպեցի, էջ 31։

48 Ադոնց. նշվ. աշխ., էջ 401։

ժանումը պատկանել են Հայաստանյայց Աթոռին։ Կորյունի մոտ հիշատակվում է նաև Խորձենական գավառի Տիր եպիսկոպոսը[49], իսկ Փարպեցու մոտ՝ Եկեղյաց և Տարոնի եպիսկոպոսների հետ միասին նաև Խորձենականից (բնագրում՝ Խորձյան) հավանաբար նույն Տիր եպիսկոպոսը և Պաղնատուն գավառից՝ Հովսեփ եպիսկոպոսը[50], որոնց մասին չկա հիշատակություն Ագաթանգեղոսի կամ Բուզանդի մոտ։ Սրանց Սահակ կաթողիկոսը տվել էր Մաշտոցին որպես օգնականներ։ Կորյունի և Փարպեցու այս անուղղակի տվյալները վկայում են, որ Խորձենական և Պաղնատուն գավառների եպիսկոպոսությունները եթե չեն էլ հիմնվել Լուսավորչի կողմից, ապա ունեն հին ծագում և արդեն IV դարում գոյություն ունեին։ Ուստի, IV դարի Հայաստանյայց Աթոռին պատկանող եկեղեցական թեմերի ցուցակը լրանում է ևս երկուսով. 19. Պաղնատուն և 20. Խորձենական գավառներում։

Այստեղ խոսքը ոչ թե հատկապես քսան թեմերի մասին է, այլ այն գավառների և երկրամասերի, որտեղ IV դարում գոյություն են ունեցել եկեղեցական թեմեր։ Քսանը կարող էր դառնալ (և այդպես էլ է) քսաներկու, քսաներեք և այլն։ Դա բացատրվում է նրանով, որ որոշ եպիսկոպոսություններ, որոնք միավորված էին մեկ թեմի մեջ, տարբեր ժամանակներում տրոհվում էին և կազմում առանձին թեմեր։ Այսպես, Ագաթանգեղոսի մոտ Եկեղիքը և Դերջանը կազմում են մեկ թեմ, մինչդեռ Բուզանդի, Կորյունի և Փարպեցու մոտ նրանք արդեն առանձին թեմեր են։ Նույնը կարելի է ասել նաև Տարոնի և Տայքի, Տարոնի և Բզնունիքի մասին։ Տարոնը և Տայքը հունարեն Ագաթանգեղոսի, իսկ Տարոնը և Բզնունիքը՝ արաբերեն Ագաթանգեղոսի մոտ հանդես են գալիս միասին և կազմում են մեկ թեմ՝ որպես Մամիկոնյան տոհմի եպիսկոպոսություն։ Այնինչ Բուզանդի (նաև Փարպեցու) մոտ, նրանք նշվում են առանձին և այլն։

Մեծ Հայքի արևմտյան թեմերի՝ որպես Հայ Եկեղեցուն պատկանողների, մասին այլևս հիշատակություններ չկան։ Հայաստանի կայսերական մասի եպիսկոպոսությունները 387 թ. բաժանումից հետո այլևս չէին ենթարկվում Հայաստանյայց Աթոռին։ Հետևաբար, եկեղեցական ժողովների արձանագրությունները կամ եպիսկոպոսությունների վերաբերյալ մեր պատմիչների մեջբերած ցանկերը, «Գիրք թղթոցի» տվյալները թերի են ոչ թե այն առումով, որ չկան Հայաստանի կայսերական մասի թեմերի ներկայացուցիչները, այլ նրանով, որ Հայաստանյայց Աթոռին պատկանող ոչ բոլոր թեմական եպիսկոպոսներն են հիշվել կամ մասնակցել այս կամ այն եկեղեցական ժողովին։ Իսկ կայսերական մասի թեմերը Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո ենթարկվում էին արդեն կայսերական եկեղեցուն։ Այդ գավառները և երկրամասերը դուրս մնացին Հայաստանի քաղաքական սահմաններից, բնականաբար, և Հայաստանյայց Եկեղեցու իշխանությունից, քանի որ եկեղեցու իշխանությունը սկզբնական շրջանում համապատասխանում էր երկրի քաղաքական սահմաններին։

Խոսելով IV դարի Հայ Եկեղեցու թեմական բաժանման մասին, չենք կարող չանդրադառնալ Ագաթանգեղոսի մեկ այլ վկայությանը, ինչպես նաև Սաեփանոս Օրբելյանի և Ուխտանեսի տվյալներին։

Այսպես, Ագաթանգեղոսը վկայում է, որ Գրիգոր Լուսավորիչը Հայաստանի համար ձեռնադրել է ավելի քան 400 եպիսկոպոս. «...յաստիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ՝ աւելի քան զչորեքարիւր եպիսկոպոս, որք կային տեսուչք տեղեաւ տեղեաց։ Իսկ կարգ երիցունց կամ սարկաւագաց կամ անագնովասաց, և որ այլ ևս ի պաշտօն Տեառն կային՝ անթիւք էին ի բազմութենէն»[51]։ Հատկապես այս վկայությունն ի նկատի ունի Աղոնցը, որ Ագաթանգեղոսին համարում է անհավաստի աղբյուր IV դարի եկե-

49 Կորյուն, էջ 108։

50 Փարպեցի, էջ 34։

51 Ագաթանգեղոս, էջ 432։

զեցական թեմերի ուսումնասիրման համար[52]։ Բայց այստեղ խոսվում է ոչ թե չորս հարյուր թեմերի, այլ այդքան եպիսկոպոսների ձեռնադրման մասին։ Իսկ ոչ բոլոր եպիսկոպոսներն են թեմի առաջնորդներ։ Մեր պատմիչները տարբերում են վիճակավոր և ոչ վիճակավոր եպիսկոպոսներին իրարից, և հաճախ են կողք կողքի նշում «վիճակավորք և եպիսկոպոսք», «վիճակավորաց և եպիսկոպոսաց» և այլն։ Վիճակավոր եպիսկոպոսները կոչվում են նաև բարձրերեց, աթոռակալ և ժողովների ժամանակ բազմում էին Հայրապետի աջ ու ձախ կողմում։ Բացի այդ, չպետք է անտեսել քորեպիսկոպոսներին։ Ձեռնադրված այդ չորս հարյուր «եպիսկոպոսների» մեջ հավանական է որ լինեին մեծ թվով քորեպիսկոպոսներ, որոնք բնականաբար թեմակալ առաջնորդներ չէին։

Օրմանյանն ընկնում է հակառակ ծայրահեղության մեջ։ Նա, հավանական համարելով Ագաթանգեղոսի այդ տվյալը (400 թիվը), անում է հետևյալ եզրակացությունը. քանի որ պատմական Հայաստանի գավառներն ըստ «Աշխարհացույցի» մոտ երկու հարյուր են, ուստի ամեն մի գավառ է ուղարկվել մի եպիսկոպոս՝ որպես թեմի առաջնորդ, նրանց հետ էլ՝ մեկական քորեպիսկոպոս[53]։ Արդյունքում ստացվում է պատմիչի նշած չորս հարյուր թիվը։ Սակայն սա մենք համոզիչ չենք համարում, քանի որ վիճակների բաժանումը չի համապատասխանել ո՛չ նահանգների և ո՛չ էլ հատկապես գավառների բաժանմանը, այլ՝ սկզբնական շրջանում համեմատ քրիստոնեության տարածման, իսկ հետո նաև՝ իշխանի դիրքի և բարձրության։

Պետք է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա ևս։ Եկեղեցու և ընդհանրապես հայոց պատմության մեջ այլևս չենք հանդիպի եպիսկոպոսների, սարկավագների կամ եկեղեցու այլ աստիճանավորների և սպասավորների նման դանդվածային ձեռնադրման։ Դա բնական է։ Քրիստոնեությունը նոր էր պաշտոնապես ճանաչվել պետական կրոն և պաշտոնապես ճանաչված եկեղեցուն հարկավոր էին մեծ թվով եկեղեցականներ, եկեղեցական աստիճանավորներ և սպասավորներ, որպեսզի սրանք կարողանային ժողովրդի մեջ տարածել քրիստոնեական դաղափարախոսությունը և ամենակարևորը՝ պայքարեին հեթանոսական պաշտամունքի, կուռքերի և հեթանոս աստվածների դեմ։

Այս ամենը հաշվի առնելով, կարծում ենք, որ Ագաթանգեղոսի վկայությունը՝ չորս հարյուր «եպիսկոպոսների» և եկեղեցու այլ աստիճանավորների ձեռնադրման մասին հավաստի է, և դրա տակ չպետք է ուղղակիորեն հասկանալ չորս հարյուր թեմակալ եպիսկոպոսներ։ Եթե անդամ հայ պատմիչը շատ ավելի մեծ թիվ նշեր, ապա դա նույնպես տարակուսանքի տեղիք չպետք է տար։

Ըստ Ստեփաննոս Օրբելյանի, Գրիգոր Լուսավորիչը հիմնել է երեսունվեց թեմ. «Ապա կարգէ և սուրբն Գրիգոր զեկեղեցական դասս, զգահ և զպատիւ եպիսկոպոսացն. և հրամայէ բազմել ընդ ինքեան աթոռով և ոսկենկատ բարձր 36 եպիսկոպոսաց՝ 18 յաջմէ և 18 յահեկէ. յաջմէ առաջին Հարքայ եպիսկոպոսն և յահեկէ առաջինն Բասենոյն, իսկ Սիւնին յաջ կողմանն յեօթներորդն գահուն նստուցանէ...»[54]։ Գրեթե համանման տեղեկություն է հաղորդում նաև Ուխտանեսը, ըստ որի, սակայն, Լուսավորիչը հիմնվել է ոչ թե 36, այլ 30 թեմ և, ի տարբերություն Օրբելյանի, թվարկում է բոլոր երեսուն թեմերը[55]։ Երկու պատմիչներն էլ օգտվել են նույն աղբյուրից՝ Կամրջաձորի վանքի վանտհայր Սամվելի հաղորդած տեղեկություններից, որի մասին մատնանշում

52 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 384։

53 Մ. Օրմանյան. Ազգապատում, հ. Ա, էջ 99։

54 Ստեփաննոս Օրբէլեան. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 25։

55 Ուխտանէս եպիսկոպոսի Պատմութիւն Հայոց. Վաղարշապատ, 1871, էջ 100։

է նաև ինքը՝ Սա. Օրբելյանը[56]։ Իսկ թվերի տարբերությունն Առոնցը բացատրում է նրանով, որ Օրբելյանի ձեռքի տակ եղել է Սամվել Կամրջաձորեցու աշխատության մեկ այլ օրինակ[57]։

Օրբելյանը չի թվարկում իր հիշատակած 36 թեմերը, այլ նշում է միայն Հայքի և Բասենի, ինչպես նաև, բնականաբար, Սյունյաց եպիսկոպոսությունը։ Ուստի դժվար է որևէ բան ասել նրա և մեր վերը բերված ցանկի համապատասխանության կամ անհամապատասխանության մասին։ Մեր կարծիքով, Ստ. Օրբելյանը բոլոր եպիսկոպոսությունների ծագումը կապում է Լուսավորչի անվան հետ, լոկ Սյունյաց թեմի հնությունը հիմնավորելու և ավելի պատկառանք հաղորդելու համար։ Այնինչ, Սյունյաց թեմը V դարից վաղ ոչ մի տեղ չի հիշատակվում, իսկ Կորյունը վկայում է, որ Սյունյաց եպիսկոպոսությունը հիմնվել է Մաշտոցի կողմից՝ V դարի սկզբներին, Սյունիքում ծավալած իր գործունեության ժամանակ. «Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր՝... Եւ ժողովեալ մանկանս առի նիւթ վարդապետութեանն... մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիապայր սուրբ և երեւելի, հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ։ Ապա և զերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լնոյր»[58]։ Ի դեպ, հենց այս նույն Անանիա եպիսկոպոսն է, որ առաջին անգամ հիշատակվում է Հայոց եպիսկոպոսությունների ցուցակներում՝ V դարում[59]։

Այժմ վերադառնանք Ուխտանեսին։ Պատմիչը հանվանե թվարկում է երեսուն եպիսկոպոսություններ, որոնք իբր հիմնել է Գրիգոր Լուսավորիչը, և վերջում, նկատի ունենալով Ագաթանգեղոսի տվյալները (չորս հարյուր եպիսկոպոսների վերաբերյալ), անհամապատասխանությունը հարթելու համար ավելացնում է, որ Լուսավորիչը հաստատել է «ևս երեք հարիւր և եւթանասուն եպիսկոպոսք»։ Ընդ որում այդ երեսունին նա համարում է աթոռակալ և տարբերություն է դնում նրանց և «երեք հարյուր յոթանասուն» աթոռ չունեցող եպիսկոպոսների միջև։ Այդ երեսուն եպիսկոպոսություններն են.

1. եպ. Հարքայ
2. Ոստան եպ.
3. Նպ. Տայոց
4. Նպ. Մարդաղոյ
5. եպ. Արշամունեաց
6. եպ. Արծրունեաց
7. եպ. Սիւնեաց
8. եպ. Ռշտունեայ
9. եպ. Մոկաց
10. եպ. Ամատունեայ
11. եպ. Բասենոյ
12. եպ. Մամիկոնէից
13. եպ. Բագրեւանդայ
14. Նպ. Խորխորունեայ
15. եպ. Արշարունեայ
16. եպ. Ապահունեաց
17. եպ. Արշամունեայ
18. եպ. Գնունեաց
19. Նպ. Գողթան
20. եպ. Գարդմանայ
21. եպ. Ակէոյ
22. եպ. Երուտակայ
23. եպ. Բաժունեաց
24. եպ. Ասորեաց
25. եպ. Անձեւացեաց
26. Նպ. Պալունեաց
27. եպ. Մեհնունեաց
28. եպ. Էլոյ
29. Նպ. Զարեւանի
30. եպ. Միւսաւորեաց (միւս Ասորեաց)[60]։

Մենք հանդամանորեն կանգ չենք առնի և քննության չենք ենթարկի ուխտանեսյան ցանկը։ Միայն հակիրճ կերպով կփորձենք հիմնավորել, որ

---

56 Սամփանոս Օրբելեան, էջ 25։

57 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 361—362։

58 Կորյուն, էջ 108։

59 Եղիշե. Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 27—28։ Փարպեցի. էջ 100—101։

60 Ուխտանես, էջ 100։

այդ ցանկը չի վերաբերում IV դարին և խոսքը Գրիգոր Լուսավորչի օրոք կամ նրա կողմից հիմնված թեմերի մասին չէ։ Իսկ թե որ դարին է վերաբերում Ուխտանեսի ցանկը, այլ ուսումնասիրության նյութ է և դուրս է մեր նպատակներից։

Այս ցանկը չի կարող վերաբերել Լուսավորչի ժամանակաշրջանի եպիսկոպոսություններին մի քանի պատճառներով։ Նախ, այստեղ չկան նրա հիմնած կամ IV դարում Հայաստանյայց Աթոռին պատկանած թեմերը՝ Եկեղիքի, Դերջանի, Դարանաղիի, Ծոփքի, Սպերի, Կարինի, Խորձենականի, Պաղնատանու։ Հայաստանի կայսերական մասի այս թեմերը 387 թ. բաժանումից հետո չէին պատկանում Հայաստանյայց Աթոռին և դուրս էին Հայ Եկեղեցու իրավասությունից։ Այնուհետև, մի շարք եպիսկոպոսությունների անվանումներ վկայում են, որ այս ցանկը պատկանում է IV դարից շատ ավելի ուշ ժամանակաշրջանի։ Այսպես, Ուխտանեսի ցանկում առաջինը նշված է Հարքի եպիսկոպոսը։ Մինչև V դարի կեսերը Հարքի թեմը կոչվել է Մանազկերտի (Բուզանդ, Փարպեցի, Եղիշե) և միայն 450 թ. հետո (450 թ. Արտաշատի եկեղեցական ժողովի ցուցակներում այդ թեմը դեռևս կոչվում էր Մանազկերտ անվամբ)[61] այն անվանվում է Հարքի եպիսկոպոսություն[62], այսինքն՝ այն դավառի անունով, որտեղ գտնվել է Մանազկերտը։ Սյունյաց թեմի առաջացման ժամանակաշրջանի մասին արդեն խոսել ենք՝ կապված Ստ. Օրբելյանի վկայության հետ։ Տարոնի եպիսկոպոսությունը, ինչպես դա երևում է հունարեն Ագաթանգեղոսի տվյալներից[63], Տայքի կամ, ըստ Ագաթանգեղոսի արաբական վերսիայի[64], Բղնունիքի հետ կազմել է մեկ թեմ։ IV դարի վերջերից կամ V դարի սկզբներից, ինչպես ասվել է, նրանք հանդես են գալիս առանձին և կազմում են ինքնուրույն թեմեր։ Ուխտանեսյան ցանկում չկա Տարոնի թեմը, սակայն չենք կարող խոսել այդ թեմի ներկայացուցչի բացակայության մասին, որովհետև սկսած V դարից (հավանաբար V դարի վերջերից, քանի որ 450 թ. Արտաշատի ժողովում այդ թեմը դեռևս անվանվում է Տարոնի եպիսկոպոսություն) այն կոչվում է «Տարոնի և Մամիկոնէից»[65] կամ ուղղակի «Մամիկոնէից» եպիսկոպոսություն, ինչպես Ուխտանեսի մոտ է[66]։ Աղձնյաց և Կորդվաց եպիսկոպոսությունների բացակայությունը ևս վկայում է, որ այս ցուցակը Լուսավորչի ժամանակաշրջանին չի պատկանում։ Այնուհետև, Էլոյի (Ելոյ, Եդոյ, Էլի) եպիսկոպոսությունը բացի Ուխտանեսի ցանկից, առաջին անգամ հիշատակվում է VI դարի վերջերին և VII-ի սկզբին՝ (Հոհանիկ եպիսկոպոս) Դվինի ժողովում, Մովսես կաթողիկոսի մահից հետո նոր կաթողիկոս ընտրելու կապակցությամբ[67], որից հետո (607 թ. Արրահամ կաթողիկոսի գումարած ժողովում[68] և այլն) միշտ հանդիպում է եպիսկոպոսությունների ցանկերում։

Նկատի ունենալով այս բոլորը՝ մի շարք թեմերի առաջացման ժամանակաշրջանը, մի քանիսի անվանումների փոփոխությունները, և ամենակարևորը՝ կայսերական մասի թեմերի բացակայությունը, կարծում ենք, որ հայ եպիսկոպոսությունների ուխտանեսյան ցանկը չի կարող վերաբերել IV դարին, առավել ևս՝ Լուսավորչի ժամանակաշրջանին։

Այսպիսով, ինչպես տեսանք վերը, մեր պատմիչների (Ագաթանգեղոս, Բուզանդ, Կորյուն, Փարպեցի), ինչպես նաև օտար մի շարք աղբյուրների տեղեկությունները, մինչև IV դարի վերջը եպիսկոպոսական թեմերի վերաբեր-

---

61 Փարպեցի, էջ 100—101։ Եղիշե, էջ 27—28։

62 Գիրք թղթոց, էջ 41—42, 73 և հտ.։

63 Garitte. Op. cit., p. 102, 104, 172.

64 Н. Марр. Указ. соч., с. 136—137.

65 Գիրք թղթոց, էջ 73։

66 Տե՛ս նաև՝ Գիրք թղթոց, էջ 41, 78, 223—224 և այլն։

67 Նույն տեղում, էջ 146—147։

68 Նույն տեղում, էջ 149, 151։

յալ, համընկնում են։ Մենք հակված ենք այն մտքին, որ այն բոլոր եպիսկոպոսությունները, որոնց մասին խոսվեց, հավանաբար լրիվ ցուցակը չէ IV դարի Հայ Եկեղեցու թեմերի։ Բայց կարծում ենք, որ հայոց գրերի գյուտից և Սահակ—Մաշտոցի գործունեությունից հետո, որը շրջադարձային էր ոչ միայն մեր մշակույթի, քաղաքական, այլև եկեղեցու պատմության համար, մեծ թափով ընթացավ նոր թեմերի հիմնումը՝ կապված քրիստոնեության ավելի լայն տարածման և նրա անհրաժեշտության ընդունման հետ։ Այն ցելադրված էր նաև Պարսկաստանի կողմից գնալով ուժեղացող կրոնափոխության քաղաքականությամբ, ինչպես նաև նեստորական, մանիքեական և այլ հոսանքներին դիմակայելու անհրաժեշտությամբ։

ЕПАРХИАЛЬНОЕ ДЕЛЕНИЕ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В IV ВЕКЕ

А. С. КАЗАРЯН

Резюме

После установления в Армении христианства как государственной религии начинается процесс основания церковных епархий. В начальный период, при Григории Просветителе, епархии были основаны главным образом в западных, юго-западных и южных краях Армении, что объясняется следующими причинами. Во-первых, до официального обращения армян в этих краях (Софена, Дерджан, Ангел т., Екегик и т. д.) уже существовали христианские общины, что облегчило дело создания первых епархий. Во-вторых, это было связано с двумя основными путями проникновения христианства в Армению, одного—с запада, из восточных провинций Римской империи—Каппадокии и Малой Армении, сопредельных с западными гаварами Великой Армении, и второго—с юга, из Сирии—Эдессы, сопредельной с ее южными и юго-западными гаварами. Первоначально, при Григории Просветителе, как явствует из данных Агатангелоса и других источников, в Армении было основано 20 епархий.